

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Մինոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 13 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են`

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղի ջրատարի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ակնաղբյուր գյուղի համայնքային կենտրոնի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի թիվ 56 միջնակարգ դպրոցի համակարգչային դասարանի կահավորում», «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 (202) գիշերօթիկ մտուր-մանկապարտեզի հիմնանորոգման նախագծում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի 1-ի գոտու ջրացանցի կառուցում» ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի մշակում» ծրագիրը, որի նպատակն է պատրաստել այդ բնագավառում բարձր տեսական և կիրառական գիտելիքներով զինված մասնագետներ, ինչպես նաև վերագինել համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կրթական լաբորատորիաները:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Քրիստոնեական ամառային ճամբար», որի նպատակն է նպաստել Տավուշի երեխաների կենսամակարդակի, առողջական վիճակի բարելավմանը ու քրիստոնեական արժեքների բարձրացմանը և «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մանկական խաղահրապարակի կահավորում խաղասարքերով» ծրագրերը:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խմելու և ոռոգման ջրագծեր Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի գյուղերում» ծրագիրը:

«Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Միասին ապրել, միասին սովորել» ծրագիրը, որի նպատակն է մեկ մարզի մակարդակում ստեղծել ընդօրինակելի մոդելներ և մեխանիզմներ, որոնք հավասար հնարավորություններ են տալիս

հաշմանդամ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին կրթություն ստանալ:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հին պարիսպի քանդման և տարածքի բարեկարգման» և «Իմ Գանձարանը» ծրագրերը:

«Գյումրու հայկական «Ինտերհելփ» բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 2010 թվականին իրականացվող ծրագրի մասին, որի նպատակն է Գերմանիայի Հոֆ քաղաքի «Օգնություն մտերիմներին» կազմակերպության կողմից ուղարկված բեռի անհատույց բաշխում Շիրակի մարզի կազմակերպություններին, որոնք էլ այն անհատույց բաշխելու են իրենց շահառուներին:

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արարատի մարզի Փոքր Վեդու համայնքի մշակույթի տան վերանորոգում» ծրագիրը:

«Օթնան» Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիա հասարակական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միզրացիոն պետական ծառայության ընդհանուր բաժնի վերանորոգման» ծրագիրը:

Նիստում քննարկվել է և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: